

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

**Էջմիածին քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և Մցխեթա քաղաքի (Վրաստանի Հանրապետություն) միջև**



Հաշվի առնելով Էջմիածին քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և Մցխեթա քաղաքի (Վրաստանի Հանրապետություն) միջև փոխշահավետ բարեկամական կապեր զարգացնելու ձգտումը,

առաջնորդվելով Էջմիածին և Մցխեթա քաղաքների միջև հարաբերությունները շարունակելու և զարգացնելու ձգտումով՝ Հայաստանի և Վրաստանի միջև ընկերական հարաբերությունների ամրապնդման շահերից ելնելով,

Էջմիածին քաղաքը (Հայաստանի Հանրապետություն) և Մցխեթա քաղաքը (Վրաստանի Հանրապետություն), կնքում են սույն համագործակցության հուշագիրը հետևյալի մասին.

- Կողմերը նպատակ ունեն զարգացնել համագործակցություն հետևյալ բնագավառներում՝
  Մշակույթ, կրթություն և գիտություն, բնակչության սոցիալական ապահովություն, առողջապահություն, տեղական կառավարում, Էկոլոգիա, Էկոնոմիկա և ներդրումային գործունեություն, քաղաքային տնտեսություն, սպորտ, տուրիզմ, տեղեկատվական տեխնոլոգիաներ:
- Աջակցել և օժանդակություն ցուցաբերել քաղաքային հաստատությունների, կազմակերպությունների, հասարակական, կազմակերպությունների, ձեռնարկությունների և մասնագետների միջև գործունեության տարբեր ոլորտներում ուղիղ կապեր հաստատելու գործում:
- Համագործակցության կոնկրետ ծրագրեր համաձայնեցնել և հաստատել կանոնավոր կերպով նամակներ փոխանակելու միջոցով, որից կբխի համապատասխան պայմանագրի կնքումը:
- Իրականացնել քաղաքների պատվիրակությունների փոխայցեր և կապեր պաշտոնական ներկայացուցիչների միջև:
- Իրականացնել Էջմիածին և Մցխեթա քաղաքների բնակչության կյանքի և երկու պետությունների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին տեղեկատվության փոխանակում:
- Աջակցել և զարգացնել փոխշահավետ գործնական, առևտրային հարաբերություններ, նպաստել գործարար անձանց պատվիրակությունների փոխայցերին և համատեղ փոխշահավետ տնտեսական կապերի իրականացմանը:

- Պարբերաբար անցկացնել տվյալ հուշագրի կատարման մոնիտորինգ՝ փոխադարձ նամակագրության կամ անձնական հանդիպումների միջոցով:
- Սույն հուշագիրը հիմք է հանդիսանում հետագայում համապատասխան պայմանագիր կնքելու համար: Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Հուշագրի տեքստի մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել կողմերի գրավոր համաձայնությամբ մինչև պայմանագրի կնքումը: Յուրաքանչյուր կողմը իրավունք ունի դադարեցնել հուշագիրը՝ մյուս կողմին առնվազն վեց ամիս առաջ գրավոր տեղեկացնելու միջոցով:
- Հուշագիրը կազմված է հայերենով և վրացերենով. երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Ստորագրված է Էջմիածին քաղաքում 2015թ. նոյեմբերի 20-ին:

**Էջմիածին քաղաքի կողմից՝**

**Էջմիածնի քաղաքապետ**
**Կարեն Գրիգորյան**

**Մցխեթա քաղաքի կողմից՝**

**Մցխեթայի քաղաքապետ**
**Ավթանդիլ Նեմսիցվերիձե**

## თანამშრომლობის მემორანდუმი
## ქალაქ ეჩმიაწინსა (სომხეთის რესპუბლიკა) და
## ქალაქ მცხეთას (საქართველო) შორის

ვითვალისწინებთ, რომ ქალაქ ეჩმიაწინსა (სომხეთის რესპუბლიკა) და ქალაქ მცხეთას (საქართველო) შორის არსებობს ურთიერთმომგებიანი მეგობრული კავშირის გაფართოების სურვილი და ვხელმძღვანელობთ იმით, რომ ქალაქი ეჩმიაწინი და ქალაქი მცხეთა დაინტერესებულნი არიან გააგრძელონ ურთიერთობები, რაც ხელს შეუწყობს შემდგომში საქართველოსა და სომხეთის მეგობრული კავშირის განმტკიცებას, აქედან გამომდინარე

ქალაქი ეჩმიაწინი(საქართველოს რესპუბლიკა) და ქალაქი მცხეთა (საქართველო) ვდებთ მოცემულ მემორანდუმს შემდეგზე:

- მხარეები მიზნად ისახავენ განავითარონ ურთირთთანამშრომლობა შემდეგ სფეროებში: კულტურა, განათლება და მეცნიერება, მოსახლეობის სოციალური უზრუნველყოფა, ჯანმრთელობის დაცვა, ადგილობრივი მმართველობა, ეკოლოგია, ეკონომიკა და ინვენსტიციური საქმიანობა, ქალაქის ეკონომიკა, სპორტი, ტურიზმი, საინფორმაციო ტექნოლოგიები.
- დაეხმარონ და ხელი შეუწყონ ქალაქის დაწესებულებებს, ორგანიზაციებს, საზოგადოებრივ ორგანიზაციებს, საწარმოებს და სპეციალისტებს თანამშრომლობის სხვადასხვა სფეროებში ერთმანეთთან უშუალო კავშირის დამყარების საქმეში.
- თანამშრომლობის კონკრეტული პროგრამები შეუთანხმონ ერთმანეთს წერილების გაცვლის საშუალებით, აქედან გამომდინარე დადონ შესაბამისი ხელშეკრულებები.
- გაცვალონ ინფორმაცია ქალაქ ეჩმიაწინისა და ქალაქ მცხეთის მოსახლეობის ცხოვრებისა და ორი სახელმწიფოების ადგილობრივი მმართველობის ორგანოების საქმიანობის შესახებ.
- ხელი შეუწყონ ურთიერთმომგებიან საქმიან, სავაჭრო ურთერთობების განვითარებას, დაეხმარონ მეწარმეებს დელეგაციების გაცვლისა და ერთობლივი ურთიერთმომგებიანი ეკონომიკური კავშირის განმტკიცების საქმეში.
- პერიოდულად ჩაატარონ მოცემული მემორანდუმის განხორციელების მონიტორინგი, ურთიერთთანამშრომლობის ან პირადი შეხვედრების მეშვეობით.
- მოცემული მემორანდუმი საფუძველს წარმოადგენს შემდგომში შესაბამისი ხელშეკრულების გასაფორმებლად. მემორანდუმი ძალაში შედის ხელმოწერის დღიდან. მემორანდუმის ტექსტში შესაძლებელია ცვლილებების შეტანა მხარეთა წერილობითი

თანხმობის შედეგად ხელშეკრულების გაფორმებამდე. თითოეულ მხარეს უფლება აქვს შეწყვიტოს მემორანდუმი, მეორე მხარისათვის არა ნაკლებ ექვსი თვით ადრე წერილობითი სახით გაფრთხილების შემდეგ.

- მემორანდუმი შედგენილია სომხურ და ქართულ ენებზე, ორივე ტექსტს გააჩნია თანაბარი იურიდიული ძალა.
- ხელმოწერილია ქალაქ ეჩმიაწინში 2015 წლის 20 ნოემბერს.

| | |
|---|---|
| ქალაქ ეჩმიაწინის მხრივ | ქალაქ მცხეთის მხრივ |
| --------------------------- | --------------------------- |
| ქალაქ ეჩმიაწინის მერი | ქალაქ მცხეთის მერი |
| კარენ გრიგორიან | ავთანდილ ნემსიწვერაძე |

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
**Էջմիածին քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և**
**Մցխեթա քաղաքի (Վրաստանի Հանրապետություն)**
**միջև**

Էջմիածնի քաղաքապետարանը ի դեմս քաղաքապետ Կարեն Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից և Մցխեթայի քաղաքապետարանը ի դեմս քաղաքապետ Ավթանդիլ Նեմսիցվերիձեի, որը գործում է կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), առաջնորդվելով Էջմիածին և Մցխեթա քաղաքների միջև հարաբերությունները շարունակելու և զարգացնելու ձգտումով, բարձր գնահատելով գործընկերությունը և համագործակցությունը երկու քաղաքների միջև, Հայաստանի և Վրաստանի միջև բարեկամական հարաբերությունների ամրապնդման շահերից ելնելով, հաշվի առնելով Էջմիածին քաղաքի և Մցխեթա քաղաքի միջև փոխշահավետ բարեկամական կապեր զարգացնելու ձգտումը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1.Պայմանագրի առարկան

Կողմերը նպատակ ունեն

1.1.Զարգացնել համագործակցություն հետևյալ բնագավառներում՝ մշակույթ, կրթություն և գիտություն, բնակչության սոցիալական ապահովություն, առողջապահություն, տեղական կառավարում, էկոլոգիա, էկոնոմիկա և ներդրումային գործունեություն, քաղաքային տնտեսություն, սպորտ, զբոսաշրջություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ:

1.2.Աջակցել և օժանդակություն ցուցաբերել քաղաքային հաստատությունների, կազմակերպությունների, հասարակական, կազմակերպությունների, ձեռնարկությունների և մասնագետների միջև գործունեության տարբեր ոլորտներում ուղիղ կապեր հաստատելու գործում:

1.3.Համագործակցության կոնկրետ ծրագրեր համաձայնեցնել և հաստատել կանոնավոր կերպով նամակներ փոխանակելու միջոցով:

1.4.Իրականացնել քաղաքների պատվիրակությունների փոխայցեր և կապեր պաշտոնական ներկայացուցիչների միջև:

1.5.Իրականացնել Էջմիածին և Մցխեթա քաղաքների բնակչության կյանքի և երկու պետությունների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին փորձի փոխանակում:

1.6.Աջակցել և զարգացնել փոխշահավետ գործնական, առևտրային հարաբերություններ, նպաստել գործարար անձանց պատվիրակությունների փոխայցերին և համատեղ փոխշահավետ տնտեսական կապերի իրականացմանը:

1.7.Պարբերաբար անցկացնել տվյալ պայմանագրի կատարման մոնիտորինգ՝ փոխադարձ նամակագրության կամ անձնական հանդիպումների միջոցով:

2.Եզրափակիչ դրույթներ

2.1.Սույն պայմանագիրը կազմվել է հավասարազոր չորս օրինակից, երկու հայերենով և երկու վրացերենով: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է երկուական օրինակ՝ հայերենով և վրացերենով:

2.2.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.3.Պայմանագրի տեքստի մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

2.4.Սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, այդ մասին առնվազն երկու ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

Ստորագրված է Մցխեթա քաղաքում 2016թ. հունիսի 20-ին:

**Էջմիածին քաղաքի կողմից՝**

**Էջմիածնի քաղաքապետ**
**Կարեն Գրիգորյան**

**Մցխեթա քաղաքի կողմից՝**

**Մցխեթայի քաղաքապետ**
**Ավթանդիլ Նեմսիցվերիձե**

# თანამშრომლობის ხელშეკრულება

*ქალაქ ეჯმიაწინსა (სომხეთის რესპუბლიკა) და*
*ქალაქ მცხეთას (საქართველო) შორის*

ერთი მხრივ, ეჯმიაწინის მერია, ქალქის მერის კარენ გრიგორიანის სახით, რომელიც მოქმედებს წესდების საფუძველზე და მეორე მხრივ, მცხეთის მერია, ქალაქის მერის ავთანდილ ნემსიწვერიძის სახით, რომელიც მოქმედებს წესდების საფუძველზე (შემდგომში „მხარეები“), ეჯმიაწინსა და მცხეთას შორის ურთიერთობების გაგრძელებისა და განვითარების სულისკვეთებით აღჭურვილნი მაღალ დონეზე აფასებენ ორ ქალაქს შორის პარტნიორობასა და თანამშრომლობას და საქართველოსა და სომხეთს შორის მეგობრული ურთიერთობის განმტკიცების ინტერესებიდან გამომდინარე, ქალაქ ეჯმიაწინსა და ქალაქ მცხეთას შორის ურთიერთმომგებიანი მეგობრული კავშირის განმტკიცების მიზნით დებენ მოცემულ ხელშეკრულებას შემდეგზე:

## 1.*ხელშეკრულების საგანი*

მხარეები მიზნად ისახავენ:

1.1. განავითარონ თანამშრომლობა შემდეგ სფეროებში: კულტურა, განათლება და მეცნიერება, მოსახლეობის სოციალური უზრუნველყოფა, ადგილობრივი მმართველობა, ეკოლოგია, ეკონომიკა და ინვენსტიციური საქმიანობა, საქალაქო ეკონომიკა, სპორტი, ტურიზმი, საინფორმაციო ტექნოლოგიები.

1.2. დაეხმარნონ და ხელი შეუწყონ საქალაქო დაწესებულებებს, ორგანიზაციებს, საზოგადოებრივ ორგანიზაციებს, საწარმოებსა და სპეციალისტებს საქმიანობის სხვადასხვა სფეროებში პირდაპირი კავშირის დამყარების საქმეში.

1.3. თანამშრომლობის კონკრეტული პროგრამა შეუთანხმონ და დაამტკიცონ პერიოდულად წერილების გაცვლის გზით.

1.4. განახორციელონ ქალაქების დელეგაციების გაცვლა და ოფიციალურ წარმომადგენელთა შორის კავშირი.

1.5. გაუზიარონ გამოცდილება ქალაქ ეჯმიაწინსა და ქალაქ მცხეთას შორის მოსახლეობის ცხოვრებისა და ორი სახელმწიფოს ადგილობრივი მმართველობის ორგანოების საქმიანობის შესახებ.

1.6. დაეხმარნონ და განავითარონ ურთიერთმომგებიანი საქმიანი, სავაჭრო ურთიერთობანი, ხელი შეუწყონ ბიზნესმენებს დელეგაციების გაცვლისა და ერთობლივი ორმხრივ მომგებიანი ეკონომიკური კავშირის განმტკიცების საქმეში.

1.7. პერიოდულად ჩაატარონ მოცემული ხელშეკრულების შესრულების მონიტორინგი წერილების გაცვლით ან პირადი შეხვედრების საშუალებით.

## 2. დასკვნითი დებულებები

2.1. მოცემული ხელშეკრულება შედგენილია ოთხ ეგზემპლიარად, ორი ეგზემპლიარი სომხურ ენაზე და ორიც ქართულ ენაზე. მხარეთაგან თითოეულს ეძლევა ორ-ორი ეგზემპლიარი - ქართულ და სომხურ ენებზე.

2.2. ხელშეკრულება ძალაში შედის ხელმოწერის მომენტიდან.

2.3. ხელშეკრულების ტექსტში ცვლილებები და დამატებები შესაძლებელია შეტანილი იქნას ურთიერთშეთანხმების გზით.

2.4. მოცემული ხელშეკრულება შესაძლებელია გაუქმებული იქნას მხარეთაგან თითოეულის ინციატივით, ამის შესახებ სულ მცირე ორი თვით ადრე მეორე მხარისათვის წერილობითი სახით შეტყობინების გაგზავნის გზით.

ხელმოწერილია ქალაქ მცხეთაში 2016 წლის 20 ივნისს.

ქალაქ ეჯმიაწინის მხრივ

---------------------------------

ეჯმიაწინის მერი
კარენ გრიგორიან

ქალაქ მცხეთის მხრივ

---------------------------------

მცხეთის მერი
ავთანდილ ნემსიწვერაძე